



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 մարտի 2021թ. թիվ 149-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի**  
**ԹԻՎ 721-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5)-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 251-Ն որոշման 2-րդ կետը և ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի մարտի 16-ի թիվ 327 հրամանը՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի հաստիքացուցակը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 332-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 721-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի «Առանձնացված ստորաբաժանումներ» մասը:

2) Հավելվածի «Ընդհանուրը» տողում «133» թիվը փոխարինել «112» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

3/16/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉՆԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉՆԱՏՐՅԱՆ

2021թ. մարտի 16  
ք.Վանաձոր